Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 7-ի N 2113-Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2001 թվականի
նոյեմբերի 20-ի N 1134 որոշման

Կ Ա Ր Գ

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԵՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են գեոդեզիական և իրական ժամանակում գործող կետերի (Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գեոդեզիական (պլանային, բարձունքային) ցանցերի, իրական ժամանակում մշտապես գործող պետական ռեֆերենց կայանների ցանցերի և պետական ծանրաչափական ցանցերի կետերի) պահպանության հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անհրաժեշտ ճշտությամբ կոորդինատների և բարձրությունների միասնական համակարգ ապահովելու, անհրաժեշտ գեոդեզիական տվյալների բանկ ստեղծելու, քարտեզագրա-գեոդեզիական աշխատանքներ իրականացնելու նպատակով կիրառվում են գեոդեզիական (պլանային, բարձունքային, այդ թվում՝ աստղագեոդեզիական, նիվելիրային և իրական ժամանակում մշտապես գործող) և ծանրաչափական ցանցեր:

3. Գեոդեզիական ցանցերը երկրի մակերևույթի վրա ամրացված գեոդեզիական կետերի ամբողջություն են, որոնց դիրքը որոշված է պետական (ազգային) և միջազգային կոորդինատային համակարգերում (WGS-84): Տեղանքում ճիշտ կողմնորոշվելու և հեշտ գտնելու համար գեոդեզիական կետերն ունեն համապատասխան արտաքին ձևավորում: Գեոդեզիական կետերի կենտրոնները, արտաքին մետաղական նշանները, հիմնական պարամետրերը և չափերը, ինչպես նաև

տեխնիկական պահանջները սահմանված են որպես ազգային ստանդարտ (ՀՍՏ 226-2002 "):

4. Գեոդեզիական կետերի կենտրոններին վերագրվում են գեոդեզիական կոորդինատներ: Դրանք կարող են լինել նաև աստղագեոդեզիական, ծանրաչափական և նիվելիրացման չափագրումների արդյունքում ստացվող տվյալների կրիչներ:

5. Եռանկյունավորման, տրիլատերացիայի, պոլիգոնոմետրիայի և GPS (Գլոբալ դիրքորոշման կայան) կետերի կենտրոնների վրա դրվում են արտաքին նշաններ, որոնք ծառայում են տեղանքում կետերի ճանաչման և նշման համար: Այն առարկաները, որոնք ընդունվում են որպես գեոդեզիական կետեր, ունենում են գեոդեզիական կետի նշանակություն և ենթակա են պահպանության:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանության ենթակա են՝

1) պետական գեոդեզիական ցանցի կետերը՝

ա. պետական (ազգային) պլանային գեոդեզիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, արտաքին նշանները, կողմնորոշիչ կետերը,

բ. պետական (ազգային) բարձունքային գեոդեզիական ցանցի կետերը, հիմնային, գրունտային, ժայռային, պատային հենանշանները (ռեպերները) և մակնիշները.

2) պետական ծանրաչափական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, ուղեկից կետերը և ստուգողական հենանշանները.

3) մշտական գործող պետական ռեֆերենց կայանների ցանցի կետերը.

4) հատուկ գեոդեզիական ցանցերի կետերը՝ դրանց արտաքին նշանները, կենտրոնները, ստուգողական մակնիշները: Հատուկ գեոդեզիական ցանցերի կետեր են հանդիսանում գետնի մակերևույթին հիմնական ամրացված գեոդեզիական ցանցերի կետերը, որոնք ստեղծված են ըստ հատուկ տեխնիկական պայմանների՝ էլեկտրակայանների, հիդրոհանգույցների, հանքահորերի, մետրոպոլիտենների, թունելների, խոշոր կառույցների և այլ նշանակության օբյեկտների շինարարության իրականացման, շահագործման և դիտարկման, ինչպես նաև այլ ոլորտային գործառույթներում կիրառելու համար:

7. Շինարարական ցանցերի և գեոդեզիական նշահարման ցանցերի կետերը ենթակա են պահպանման հատուկ (շինարարական աշխատանքների համար մշակված) հրահանգների պահանջներին համապատասխան:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ, ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԵՆՑ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՆՐԱՉԱՓԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԵՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

8. Համաձայն «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 16-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գեոդեզիական (պլանային, բարձունքային, այդ թվում՝ աստղագեոդեզիական, նիվելիրային) ցանցերի, իրական ժամանակում մշտապես գործող պետական ռեֆերենց կայանների ցանցերի և պետական ծանրաչափական ցանցերի կետերի (այսուհետ՝ պետական ցանցի կետեր) պահպանությունը համայնքի վարչական սահմաններում իրականացնում է համայնքի ղեկավարը: Մշտական գործող պետական ռեֆերենց կայանների ցանցերի կետերի դեպքում պահպանության են տրվում նաև համապատասխան սարքավորումները:

9. Պահպանության են հանձնվում սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր նոր տեղադրված և նախկինում պահպանության չհանձնված տեղագրագեոդեզիական աշխատանքների կատարման ժամանակ հետազոտված ու վերականգնված պետական ցանցի կետերը:

10. Պետական ցանցի կետերի պահպանության հանձնումն իրականացվում է ակտով՝ համաձայն N 2 ձևի: Ակտը կազմվում է 2 օրինակից՝ հաստատված Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) և համայնքի ղեկավարի կողմից: Ակտին կցվում է պետական ցանցի կետերի ցանկը՝ տեղադիրքի նկարագրությամբ:

11. Պետական ցանցի կետերի պահպանվածության ստուգման և հետագայում օգտագործելու համար արդի վիճակում պահելու նպատակով կոմիտեի կողմից պարբերաբար (առնվազն 5 տարին մեկ անգամ) հետազոտվում և թարմացվում է արտաքին ձևավորումը:

12. Պետական ցանցի կետերը վերականգնվում, դրանց արտաքին ձևավորումը թարմացվում ու հետազոտվում է կոմիտեի կողմից:

13. Պետական ցանցի կետերը կարող են հետազոտվել ու վերականգնվել այլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից՝ կոմիտեի համաձայնությամբ:

14. Հատուկ գեոդեզիական ցանցերի կետերի պահպանության ապահովումն իրականացվում է համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԿԵՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

15. Պետական ցանցի կետերի հաշվառումն իրականացվում է կոմիտեի կողմից:

16. Հաշվառման ենթակա են պետական ցանցի կետերը:

17. Պետական ցանցի կետերի հաշվառման համար հիմք են համարվում հրատարակված կատալոգները և աշխատանքների կատարման տեխնիկական հաշվետվությունները:

18. Պետական ցանցի կետերի հաշվառումն իրականացվում է ըստ կոորդինատների և բարձրությունների հրատարակված կատալոգների՝ գեոդեզիական ուսումնասիրության մատյաններում և գրաֆիկական նյութերի վրա՝ ըստ պայմանական նշանների:

19. Պետական ցանցի կետերի քանակական հաշվառումն իրականացվում է գեոդեզիական կետերի հաշվառման ամփոփագրում՝ համաձայն N 3 ձևի:

20. Կատարված տեղագրագեոդեզիական աշխատանքների հաշվետու փաստաթղթերի հիման վրա ուսումնասիրության մատյաններում, գրաֆիկական նյութերում և գեոդեզիական կետերի հաշվառման ամփոփագրերի մեջ կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ:

21. Հատուկ գեոդեզիական ցանցերի կետերի հաշվառումն իրականացվում է համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից:

4. ՊԵՏԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԿԵՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

22. Պետական ցանցի կետերի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից:

23. Պետական ցանցի կետերը քանդվում կամ տեղափոխվում են միայն կոմիտեի համաձայնության դեպքում:

24. Պետական ցանցի կետերը վնասող կամ ոչնչացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

25. Որևէ տնտեսական կամ այլ գործունեության արդյունքում, որը կարող է նախատեսել պետական ցանցի կետերի վնասում կամ ոչնչացում, գործունեությունն իրականացնողը նախօրոք հարցում է կատարում կոմիտե պետական ցանցի կետերի քանդման կամ տեղափոխման հնարավորության վերաբերյալ: Կոմիտեն յուրաքանչյուր դեպքում, ելնելով պետական ցանցի կետերի խտությունից և գոյություն ունեցող պետական ցանցի կետերի հեռանկարային զարգացման ու թարմացման ծրագրերից, որոշում է կայացնում պետական ցանցի կետերի տեղափոխման կամ քանդման վերաբերյալ և ընդունված որոշման մասին գրավոր հայտնում է գործունեություն իրականացնողին: Ոչնչացված կետերի համար քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ զբաղվող, պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմվում է ակտ՝ համաձայն N 1 ձևի, որտեղ նշվում են կետի ոչնչացման պատճառները, ոչնչացման թույլտվության կամ համաձայնության ամսաթիվը և համարը: Ակտի մեկ օրինակը ներկայացվում է կոմիտե, մյուսը՝ պետական ցանցի կետը պահպանության ընդունած համայնքի ղեկավարին:

26. Պետական ցանցի կետերի (կենտրոնների, արտաքին նշանների, հենանիշերի, կողմնորոշիչ կետերի, մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցերի կետերի դեպքում՝ համապատասխան սարքավորումների) ոչնչացում կամ վնասում հայտնաբերվելու դեպքում, սույն կարգի 8-րդ կետով պետական ցանցի կետը

պահպանության ընդունած համայնքի ղեկավարի կողմից կազմվում է ակտ՝ համաձայն N 1 ձևի, և ներկայացվում է կոմիտե: Գեոդեզիական կետերի՝ առանց կոմիտեի համաձայնության, ոչնչացման կամ վնասման դեպքում տեղեկատվությունը փոխանցվում է իրավապահ մարմիններին՝ մեղավոր անձանց Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

27. Պետական ցանցի կետերի վերականգնումը՝ նոր կետի ստեղծումը (կենտրոնների տեղադրում, արտաքին նշանների կառուցում, կոորդինատների և բարձրությունների որոշում), կատարվում է կոմիտեի կողմից: Սույն կետով նշված աշխատանքների ծախսերը փոխհատուցվում են այն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից, որոնց պատճառով վնասվել կամ ոչնչացվել են այդ կետերը:

Ձև N 1

Ա Կ Տ

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿԵՏԻ ՎՆԱՍՄԱՆ (ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ)

____ _____ 20 թ.
_____
(մարզը, համայնքը)

Մենք՝ ներքոստորագրողներս _____
(ակտը կազմողների անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը)
_____

_____

կազմել ենք սույն ակտը (ոչնչացված) գեոդեզիական _____
(կետի համարը կամ անվանումը)

կետի մասին, տեղակայված _____
(նշել կետի տեղադիրքը պահպանության հանձնման ակտին համապատասխան)
_____

ընդունված ___ _____ 20 թ. N ___ գեոդեզիական կետի պահպանության հանձնման

ակտով:

Ջնման արդյունքը _____
(նշել կենտրոնի, արտաքին նշանի, ուղեցույց կետերի և արտաքին ձևավորման վիճակը,
_____
կետի վնասման կամ ոչնչացման պատճառները, ինչպես նաև համաձայնության բացակայության
_____
դեպքում մեղավոր անձանց տվյալները)

Ակտը կազմված է ____ օրինակից

Առաջին օրինակը՝ Կադաստրի կոմիտե

Երկրորդ օրինակը՝ _____
(հողօգտագործողի անվանումը)

Երրորդ օրինակը՝ _____
(ակտ կազմող կազմակերպության անվանումը)

Ստորագրություններ _____ _____
(անունը, ազգանունը)

_____ _____
(անունը, ազգանունը)

_____ _____
(անունը, ազգանունը)

_____ _____
(անունը, ազգանունը)

Ձև N 2

Ա Կ Տ

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ

____ _____ 20 թ.
_____
(մարզը, համայնքը)

Ես՝ ներքոստորագրողս _____
(հանձնողի անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը)
_____

_____

«Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գեոդեզիական և իրական ժամանակում գործող կետերի պահպանության կարգի համաձայն հանձնեցի և ես՝ ներքոստորագրողս
_____
(ընդունողի անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը)
ընդունեցի պահպանության գեոդեզիական _____ կետեր, ըստ սույն ակտի
(նշել քանակը)
հակառակ երեսի ցանկի:

Ակտը կազմված է _____ օրինակից:

Առաջին օրինակը՝ Կադաստրի կոմիտե:

Երկրորդ օրինակը՝ _____:
(պահպանության ընդունող կազմակերպության անվանումը)

_____ ղեկավարությունը պարտավորվում է

գեոդեզիական կետերը (կենտրոնը կամ արտաքին նշանը) վնասվելու կամ ոչնչացվելու դեպքում անհապաղ կազմել համապատասխան ակտ և առաջին օրինակն ուղարկել Կադաստրի կոմիտե:

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՏԻ ՀԱԿԱՌԱԿ ԵՐԵՍ

Ց Ա Ն Կ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ

NN ը/կ	Կետի տեսակը	Կետի անվանումը կամ համարը, դասը, կենտրոնի տեսակը և համարը, ուղեցուցային կետերը	Կետի տեղադիրքի նկարագրությունը, ուղեցուցային կետից հեռավորությունը և ազիմուտը
1	2	3	4

Հանձնեց _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ընդունեց _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 3

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Փաստաթղթի ստացման ամսաթիվը և համարը	Փաստաթղթի և օբյեկտի անվանումները	Աշխատանք-ների իրականաց-ման տարին	Ցանցի կետերի քանակը					
			Պետական գեոդեզիական ցանցի կետեր			Ծանրաչափական կետեր		
			հաշվառված	նոր տեղադրված	ոչնչացված	հաշվառված	նոր տեղադրված	ոչնչացված
1	2	3	4	5	6	7	8	9

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

07.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ